ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝ Անի Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 16.12.2024թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան և Փարաքար համայնքներում 2024 թվականի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/ Լիաննա Հարությունյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը, ով նշեց, որ մարզի Բաղրամյան և Փարաքար համայնքներում համապատասխանաբար 1-ին և 3-րդ եռամսյակներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ գործառույթները Փարաքարի մասով ավարտված են, որի արդյունքները մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N01/13/09482-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, իսկ Բաղրամյանի մասով՝ կատարողականը կապահովվի մինչև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված ժամկետի ավարտը՝ 2025 թվականի հունվարի 9-ը: Արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու նպատակով ներկայումս օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցված աշխատանքներ են տարվում Բաղրամյանի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների հետ:

Հանձնարարական՝

1. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված ժամկետում արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու նպատակով ակտիվ համագործակցությամբ աշխատանքներ տանել Բաղրամյանի համայնքապետարանի ղեկավարության և աշխատակազմի հետ և սահմանված ընթացակարգով արդյունքները ներկայացնել ինչպես 2025 թվականի հունվարի 9–ից հետո ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ կայանալիք գործակարգավարական խորհրդակցության ընթացքում, այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:**

Հարց 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2024 թվականի սոցիալ–տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության մասին Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվության ներկայացում

/Արամ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար/

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը, ով մասնավորապես նշեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.11.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության

միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների պահանջները, ՀՀ Արմավիրի մարզպետի տարեկան ամփոփիչ հաշվետվության նախապատրաստման նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային գրեթե բոլոր ստորաբաժանումների ղեկավարների կողմից (բացառությամբ Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության) նախապատրաստվել, ամփոփվել և սահմանված ժամկետում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին են ներկայացվել ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության հաստատված ծրագրի 2024 թվականի ամիսների կտրվածքով միջոցառումների հետ կապված, որպես համակատարող մարզպետի աշխատակազմին վերաբերելի ուղղությունների հիմքում դրված խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների կատարման ընթացքի, արդյունքների և կանոնադրական ոլորտային գործառույթների կատարողականի վերաբերյալ համապատասխան հաշվետվություններ, որոնց ամփոփմամբ տարեկան հաշվետվության նախագիծը կներկայացվի ՀՀ Արմավիրի մարզպետի քննարկմանը:

Ներկայացված տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունվեց ի գիտություն և միաժամանակ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների վարչության պետ Դավիթ Ավետիսյանին հանձնարարեց՝ մինչև աշխատանքային օրվա ավարտը ամփոփել և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին ներկայացնել համապատասխան հաշվետվությունը և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին:

Հարց 3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/Դավիթ Ավետիսյան- ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ/

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը, ով նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն իրականացվում են մրցույթներ շահած Արմավիրի տարածաշրջանում <<ՃԱՆՇԻՆՎԱՐՊԵՏ>> ՓԲԸ–ի և Էջմիածնի ու Բաղրամյանի տարածաշրջաններում՝ <<ԳՐԻԳՈՐՇԻՆ>> ՍՊԸ–ի կողմից, որոնց կատարած աշխատանքների նկատմամբ մշտադիտարկումների միջոցով իրականացվում է անհրաժեշտ հսկողություն: Նշված կազմակերպությունների կողմից ներկայացվել են համապատասխան տեղեկանքներ իրենց սպասարկման տարածաշրջանների մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքների

իրականացման համար ինչպես ներգրավվող մեքենա–մեխանիզմների անհրաժեշտ քանակության ցանկի, այնպես էլ կուտակած աղի և ավազի ծավալների վերաբերյալ: Միաժամանակ նշեց,որ ներկայումս Արմավիրի մարզում բոլոր ճանապարհներն անցանելի են:

Ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների տեղադրման կապակցությամբ տեղեկացվեց, որ Արաքս և Փարաքար համայնքների վարչական տարածքներում <<ԳՐԻԳՈՐՇԻՆ>> ՍՊԸ–ի կողմից 30.12.2024թ. դրությամբ կատարվել են աշխատանքների մոտ 50%–ը, ներկայացվել է կատարողական մոտ 12,5 մլն ՀՀ դրամի չափով, իսկ մնացածի մասով ներկայացվել է բանկային երաշխիք (ընդհանուր արժեքը մոտ 25,0 մլն ՀՀ դրամ): Աշխատանքները կատարվել են անթերի:

Խոյ և Բաղրամյան համայնքների վարչական տարածքներում <<ՌՈՈՒԴ ՄԱՐԿԻՆԳ>> ՍՊԸ–ի կողմից 30.12.2024թ. դրությամբ կատարվել են աշխատանքների մոտ 30%–ը, կատարողական չի ներկայացվել և ամբողջ մասով ներկայացվել է բանկային երաշխիք (ընդհանուր արժեքը մոտ 22,0 մլն ՀՀ դրամ): Կազմակերպության ղեկավարությանը տեղեկացվել է, որ վճարումները կկատարվեն միայն անթերի կատարված աշխատանքների վերաբերյալ կատարողական ներկայացվելու դեպքում:

Վերը նշված կազմակերպությունների հետ կնքվել են համաձայնագրեր և աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականի հունվարի 25–ը:

Ներկայացված տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունվեց ի գիտություն:

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի ուսումնասիրման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում

/Դավիթ Ավետիսյան–ՀՀ Արմավիրի
մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության,
հողաշինության և ենթակառուցվածքների
կառավարման վարչության պետ /

Օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը, ով նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի ուսումնասիրման

աշխատանքների կատարման և տեխնիկական անձնագրերի ձեռքբերման հետ կապված մասնագիտական խորհրդակցություն է կատարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ոլորտային մասնագետների հետ: Նշված խնդրի լուծման նպատակով կատարված խորհրդատվական քննարկումների արդյունքում պարզվել է, որ անհրաժեշտ է լիցենզավորված կազմակերպություններից ձեռք բերել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի վերաբերյալ փորձագիտական եզրակացություններ: Ի դեպ, նույն լիցենզավորված կազմակերպությունները նաև իրավասու են տրամադրել վերը նշված շենք–շինությունների տեխնիկական անձնագրերը:

Հանձնարարական՝

1. **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին՝ 2025 թվականին ըստ առաջնահերթության և բյուջետային հնարավորությունների ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների շենք–շինությունների տեխնիկական իրական վիճակի ուսումնասիրման և տեխնիկական անձնագրերի ձեռքբերման գործընթացն սկսելու նպատակով խմբավորել, կազմել հստակ ժամանակացույց և հաջորդ գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ներկայացնել քննարկման:**

Հարց 5. ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի 2024 թվականի արդյունքների մասին տեղեկատվության ներկայացում

/Արթուր Այվազյան–ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա
միջավայրի պահպանության վարչության պետ /

Օրակարգային հինգերորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը, ով նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 11.12.2024թ. N 01/8/08994–2024 հարցման կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 24.12.2024թ. N 01/26333–2024 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված **ՀՀ Արմավիրի մարզում**

գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի 2024 թվականի արդյունքների մասին տեղեկատվության համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիր՝

Փոխհատուցման բաղադրիչով 2024 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ թվով 6 շահառուի տրամադրվել է շուրջ 922,4 մլն ՀՀ դրամի փոխհատուցում՝ 53,7 հա այգեհիմնման համար:

Վարկային բաղադրիչով 2024 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ թվով 1 շահառուի տրամադրվել է 15,8 մլրդ ՀՀ դրամի վարկ, 450 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 202,78 մլն ՀՀ դրամ:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով, 2024 թվականի դեկտեմբերի 16-ի դրությամբ ծրագրի շրջանակում թվով 3 շահառուի տրամադրվել է շուրջ 12,12 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 11,94 հա ընդհանուր մակերեսով հողատարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար: Վարկային բաղադրիչով կնքվել է թվով 2 վարկային պայմանագիր՝ 17 մլն ՀՀ դրամի չափով՝ 10,3 հա ընդհանուր մակերեսով հողատարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար, սուբսիդավորման գումարը կազմում է 1,12 մլն ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշմամբ հաստատված Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր՝

Ծրագրի շրջանակում 1 շահառուի տրամադրվել է 17.5 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 40-45 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված «Խելացի» անասնաշենքի կառուցման նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1612-Լ որոշմամբ հաստատված Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագիր՝

Ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 45 մլն ՀՀ դրամի չափով, ընդհանուր 3000 քառակուսի մետր արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար: 1 շահառուի տրամադրվել է 21.4 մլն ՀՀ դրամի փոխհատուցում 2140 քմ արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար:

4. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝

Ծրագրի շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ հաստատվել է Արմավիրի մարզի շահառուների կողմից ներկայացված 49 հայտ՝ 2073.9 մլն ՀՀ դրամի չափով, կնքվել է 505 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 273.1 մլն ՀՀ դրամ

5. ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր՝

Ծրագրի շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ հաստատվել է Արմավիրի մարզի շահառուների կողմից ներկայացված 19 հայտ՝ 424.0 մլն ՀՀ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 18.4 մլն ՀՀ դրամ:

6. ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր՝

Ծրագրի շրջանակում 01.11.2024 թվականի դրությամբ ձեռք է բերվել 243 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 64 միավոր տրակտոր, լիզինգի գումարը կազմել է շուրջ 962.5 մլն ՀՀ դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար 2024 թվականին՝ նոյեմբերի 1-ի դրությամբ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 213.1 մլն ՀՀ դրամ:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագիր՝

Ծրագրի շրջանակում թվով երեք համայնքների 7 շահառուների կողմից իրականացված 153,77 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանքերի համար տրամադրվել է փոխհատուցում՝ 11,388,582.0 ՀՀ դրամ, իսկ համայնքներին՝ մոնիթորինգի իրականացման համար՝ 341,656.0 ՀՀ դրամ գումար:

Ներկայացված տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունվեց ի գիտություն:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-01-08 15:38:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի
ավագ փաստաթղթավար՝ Ալինա Համբարձումյան